

ՀԱՆԴԻՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆՍԲՈՒԷՈՆ Դ ԿԱՅՍՐԱՐԴԻ

Փաղղիա՝ վաղէրըյի պարտութենէն ետքը՝ իրեն առաջին ձեռք զարկած պատերազմէն յաղթական ելած էր։ Փետր. 25, 1856էն ՚ի վեր գումարուած կար իր մայրաքաղաքին մէջ համաժողով մը, ոչ եթէ յաղթողաց օրէնքը տալու նպատակաւ, ինչպէս որ բրած էր 1815ին, այլ յայտնի դաշնադրութեամբ մը, որ յետոյ լննցաւ, հաստատուեցաւ մարտի 3ին, վաւերացնելու այն դաշինքները՝ զոր Նաբոլէոն Գ ուզեց զենել ընկճուած Ռուսաստանին։

Այլ սակայն ոչ խրիմի յաղթութիւններն և ոչ զինուորականին մէջ առաջին տեղին ունենալն էր՝ որ առաւելապէս կը դրաւէին Գաղղիոյ մէջ հասարակաց մտադրութիւնը։ Սինային դը կը սպասէր քիչ օրուան մէջ կատարուելու գէպքի մը, որ կը կարծուէր թէ որոշակի պիտի հաստատէր ապագայ ըլլալու իրաց վիճակ մը, որոնց փոփոխութեանը այն ատեն շատ քիչ հայրենասէր Գաղղիացիք կը փափաքէին։

Եւ յոյսը՝ հողոյ, անձկութեան փոխուեցաւ այն ատեն երբոր իմացուեցաւ թէ մեծ վայրկեանը մօտիկ էր։ Եւգենիա կայսրուհին Նաբոլէոնեան աթոռոյն տալու վրայ էր արու ժառանգ մը կամ գոտտոր մը, որ ըստ սալեան օրինաց չէր կրնար արդեօք թագաւորել։

Քաղմաթիւ և յուզեալ ամբոխ մը կը խռնէր Դիւիլլըրիի մօտիկները, և կը կենար բոլոր օրը և բոլոր իրիկունը՝

ուրախալի լուրը լսելու յուսով։ Մարտ 16, 1856ին ծագելու օրը՝ կը լսէին Բարիզիք Էնվալիտաց թնդանօթին բոմբինը։ Սնհամբեր ականջ դրաւ ահագին քաղաքին բոլոր ժողովուրդն։ Իշխանուհւոյ ծնունդն ազդ առնելու թնդանօթին հարուածները քսանլիւմէկ կ'ըլլային, ինչպէս որ սովորութիւն է, իսկ աթոռոյն արու ժառանգի մը՝ հաւրիւր և մէկ։

Քանուկերկուցորդ հարուածին հընչելուն ատեն՝ ամեն պալատներու ամեն Բարիզու տուններուն մէջ ուրախութեան աղաղակ մը փրթաւ, և այն աղաղակը՝ ոչ միայն բոլոր Գաղղիոյ մէջ սուաւ իրեն արձագանգն, այլ և շատ ուրիշ եւրոպայի աշխարհքներ, և մասնաւորապէս Իտալիա՝ ուր արդէն սկսեւ էին տեսնել ՚ի Նաբոլէոն Գ այն մարզը՝ որ մեծ մաս մը պիտի ունենար՝ դարական օտար լուծէ մը՝ Իտալացիները ազատելուն մէջ։ Կայսերական նորածին մանուկը նոյն իրեն ծննդեան օրը ծագկազարդի կիրակին մկրտուեցաւ, և իրեն դրին այս անունները. Նաբոլէոն, Լուդովիկոս, Եւգենիոս, Յովհաննէս, Յովսէփ։ Վերջի երկու անուններէն մէկը Պիոս Թեո էր, (Յովհաննէս Մասթաի-Յէրէզզի) որ իրեն կնքահայր եղաւ, միւսը՝ Շուետի թագուհւոյն (Յովսէփինա) կնքամօրը։ Թշուառ երիտասարդին պատմութիւնը իրեն կենացը պէս կարճ է։ Բարիզցիք զինքը տեսան նախ դպիկին գիւրկը, որ քառաձի լանտոյի մը մէջ պոչը։

վարկերու գիմացէն կը վազէր . յետոյ կայսերական կառքին զոռնելին քով կեցած , ուսկից մանկական շնորհքով կը համապատասխանէր ժողովրդեան բարեին : Աւելի վերջը կը հեծնար իրեն քունիին (pony) վրայ, կամ կը պտըտէր ուղբով՝ ուժբաժիճ պահապան զօրաց նշանազգեստը հագած :

Այլ շատ շուտով եկաւ զժբաղդութեան օրը, և չորեքտասնամեայ պատանին մեկնելով իր հօրը հետ բանակը , առակիպ եղաւ Սաարայրուքի կուռն , որ Գիւլիւրի պալատականնեւրէն մեծ պատերազմի մը և մեծ յաղթութեան մը փոխուեցաւ : Իւ իրեւ թէ մասնաւոր ջանացած ըլլային ծաղրածել իրենց տիրոջ որդին , նոյն այն պալատականները՝ թնդանօթից զընտանեւրու անհեթեթ պատմութիւնն հնարեցին, որոնցմով՝ կը պատմէին թէ թաղաժառանգ իշխանն ելեր էր խաղալու՝ պատերազմի դաշտէն զանոնք ժողովէն ետքը :

Բայց Սաարայրուքի հակառակորդին յաջորդեան քիչ ատենէն վիսաւնպուրկի , վիւրթի , Զորպախի , Մեցի և Սէտանի ահաւոր օրերը : Նաբոլէոն Գ. որ իրեն հետ ունէր որդին այն քաղաքին մէջ ուսկից այս վերջի պատերազմը անունն առաւ , փութաց , զեռ զինուոց բաղդը յետին աղետաւոր խօսքը չարտասանած , զինքը Պեյճիպի մերձաւոր սահմանագլուխներն անցնելու Սասանեպ զահուն ժառանգն ելաւ իրեն երկրէն , ալ ամենեկին չդառնալու համար . քիչ ատենէն նաւարկելով դէպ 'ի Անվերսա , հասաւ մօրը , որ Գաղղիոյ յեղափոխութենէն փախչելով արդէն ապաստանած էր յԱնգղիա : Անոր հետ հաստատուեցաւ 'ի Չիլըլլըբոս , ուր հասաւ նաև յիշխանութենէն ընկած ինքնակալն , որ քանի մը ամսուան համար գերի մնացած էր Վիլլէմհէօէ զղեկին մէջ : Աքսորուած ընտանիքը բնակեցաւ Գէմտէն-Հաուզ կոչուած պալատի մը մէջ : Վուլլիչի զինուորական դպրոցը միտնելով , (նոյեմբեր 1872) , անժառանգ

գեալ պատանին իր բոլոր ընկերաց սիրտը իրեն քաշեց , և այն ատեն երբ որ արդէն դպրոցէն ելեր էր , բայց իրեն մահուանէն շատ ժամանակ առաջ , այն ընկերներէն մէկը կ'ըսէր . « Պատուական ընկեր մ'էր , միշտ պատրաստ ինքզինքը ուրիշին համար զոհելու . ամենաբաղյը , հանճարեղ , այլ ծանր և խոհեմ » :

Շուտ մը ուրիշ նոր թշուառութիւն մը եկաւ աւելցաւ մէկաշնոց վրայ : Նաբոլէոն Գ. բնական և բարոյական վիշտերէ զարնուած , կը մեռնէր 9 յունուար 1873ին , զուրկ իրեն որդին անկողնոյն քով տեսնալու մխիթարութենէն , որ թէպէտ և փութով կանչուեցաւ 'ի վուլիչ , այլ ժամանակին չհասաւ իրեն աչքերը դոցելու և տալու յետին համբոյրը :

Անպայման եղաւ իշխանին ցաւը , որ իրեն ծնողքը ստոյգ յարգանքը կը սիրէր : Այլ սակայն գիտցաւ չափ դնել իրեն զգացմանցը , և մէկէն տեսնուեցաւ վրան յանկարծակի փոփոխութիւն մը : Առջինէն շատ աւելի բուրձ եղաւ , և կանխահաւ խորագիտութեամբ ետեւեղաւ հետաքննելու զաղղիական կուսակցութեանց վիճակները , առանց և ոչ վայրկեան մը տարակուսելու կամ խաբուելու կայսրութեան վերանորոգման հաւանականութեանը վրայ . մտքին մէջ միշտ կենդանի մնաց հօրը յիշատակը , և ինքզինքը կը բռնադատէր անոր ճայնին , լեզուին , գնացիցը , քաղաւածքին և ամէն սովորութեանցը նմանցնելու . ճիշդ իրեն հօրը պէս ստիպուած էր նմանելու ամէն բանի մէջ , որչափ որ իրեն կարելի էր , իր ցեղին հիմնադրին : Նոս կերպարանացը նշանակութեանը մէջ յաջողէր էր նմանելու կայսերական իշխանը Նաբոլէոն Գին , որուն գծադրութենէն միայն քիթն ունէր , մինչդեռ իր մեծամեծ կապուտակ ալուրները իր մօրը աչաց նման էին : Այլ կը ջանար յաճախ և մեծ յաջողութեամբ նմանելու իր հօրը բնական քաղաքեկաւ աչքերուն :

Նաբոլէոն Գին մահը պատճառ եղաւ

այլ և այլ քաղաքական դէպքերու , որոնց թատր հանդիսացաւ Չիզըլէըսդը : 1872 տարւոյն ընթացից մէջ՝ պո. նաբարդեան կուսակցութիւնը քիչ մը ոգի առած էր իրեն այն սաստիկ տը. կարութենէն յորում կը գտնուէր պա. տերազմէն վերջը , և ընկած վարչու. թեան կողմնակիցներէն մեծ բազմու. թիւն մը գնաց վախճանած կայսեր ըն. ծայելու վերջին մեծարանաց պատիւ. ները : Նոյնպէս նաև գործաւորաց նուիրակութիւն մ'ալ գնաց 'ի Չիզըլ. հըրսդ , որ ողջունեց զիշխանը կնե. ցէ : Նաքոյէնոն Գ աղաղակաւ :

Վերջապէս ուրիշ և աւելի մեծ հանդէս մը պատրաստուեցաւ 16 մար. տի 1874ին . այն ատեն երբոր իշխանը տաանևուիթ տարուան եղաւ , որով և հաղորդ. իրաւանց ըստ օրինաց Պարպո. նի ցեղին , զոր կը գործածէր նաև պո. նաբարդեան տոհմը : — Նաբոյէնոն Գ՝ անկումէն ետքը՝ կայսերական կուսա. կցութեան ամենէն աւելի փառաւոր ժամանակն այն եղաւ :

Երիտասարդ Նաբոյէնոնին վրայ յայտ. նուեցան պատերազմական հակամի. տութիւններ՝ Արևելեան խնդիրն ելլե. լուն ժամանակ , խնդրեր էր Հոռնպայ ծովականին նաւատորմին ծառայու. թեանը մէջ մտնալու , այլ անդգիական կառավարութենէն բոլորովին մերժուե. ցաւ : Յետոյ ուղեց մասնակից ըլլալ աւստրիական արշաւանացը 'ի Պոսնիա , և Նորէն ժխտուեցաւ Փրանկիսկոս Յով. սէփ ինքնակալէն :

Կը ծագէր Բարեկուսոյ Գլխուն պա. տերազմը , և անժառանգեալ Նաբոյէն. նը որ կը տեսնէր դէպ 'ի հարաւային Ափրիկէ իր դպրոցական ընկերաց եր. թալը , զիմեց Նորէն լրտ Պիգոնաֆիլ. տի՝ խնդրելով մասն ունենալու պատե. բազմի մը մէջ՝ յորում անգղիացի զի. նուորներն իրենք զիրենք ծանր վտանգ. ներու դրած էին , — ինչպէս որ երև. ցեր էր այն՝ վուտ տեղակային հրամա. յած գնդերուն , երբ առաջներն իսան. տուլայի մէջ Զուլուններէն բոլորովին յաղթուեցան :

Նորէն մերժուեցաւ իշխանին խնդի. րը , այլ ասոր համար չհանդարտեցաւ , և գրեց՝ բրիտանական զօրաց զօրագըլ. խին Գէմպրիճի Դըսին նամակ մը , որ կը պարունակէր այնպիսի ջերմ աղա. չանք և խնդրուածք , որ դուքսը չի կըր. ցաւ դիմանալ , և իրեն միջամտութեամբ բը կայսերական զաւակը՝ հրաման ընդ. ունեցաւ երթալու 'ի . . . մահ :

Պատերազմի երթալուն առջի օրը գնաց իշխանը իրեն մօրը հետ աղօթե. լու Չիզըլէըսդի ուղղափառաց եկեղե. ցին , և երկար ժամանակ ծունկ չըբած կեցաւ : Այն եկեղեցւոյն մէջ կային , ա. ռալին պատուոյ տեղը , երեք աթոռ , որոնցմէ մէկը վեց տարիէ 'ի վեր պա. րապ էր , վասն զի անիկայ որ կը նստէր վրան՝ գերեզման իջած էր : Դժբախտ երիտասարդին աշունները դատարկ ա. թողոյն վրայ սեւեռած կեցած էին :

Գիշերը քանի մը ժամ փակուած ի. րեն սենեկին մէջ անցուց իշխանը , և այն միջոցին մէջ՝ զրեց իրեն կտակը , որ կարդացուեցաւ յունիսի 27ին ըն. տանեաց ժողովոյ մը առջև : Կը պատ. մեն ականատես վկայք՝ թէ իշխանը , թէպէտ և քնացաւ երեքին , բայց եր. կորորդ. օրը ելաւ վեցին փետրուար 27 , և իրեն չորս կողմը կանչելով իր հինա. ւուրց արտասուալից ծառաները , ապա. հովցուց զիրենք որ իրենց ապական հոգացեր է : Եւ յիսուի կտակն՝ կայսե. րական տանը հաւատարմագոյն ծառա. յից առատաձեռն թոշակներ պար. գեցեց :

Սրտամալիկ ողջունին վրայ որ կայ. սրուհին և որդին իրարու սուին , չենք կրնար բան մը գուրցել որ ընթերցող. ները չգիտնան կամ չկրնան գուշակել իրենք իրենցմէ :

Այսպէս վերոյիշեալ օրուան փե. տրուար 27ին Սուլթէմըղընի նաւա. հանգստէն ելլալով իշխանը , թողուց զԱնգղիա , և երբոր զինքը տանող նա. ւրն անցաւ Ֆինիսդէրի հրուանդանէն , թշուառ երիտասարդը վերջին աչք մը ձգեց այն երկրին վրայ որ զինքը ծնած տեսեր էր և որուն վրայ կը կարծուէր

որ ուսմանուած ըլլայ երկայն տարի-
ներ թագաւորելու : Ի Նազալ ցամաք
կ'ելլար ապրիլի 14ին :

Այ դը, և ոչ իսկ անգղիական տէրու-
թեան պաշտօնեայք, գիտցան ստոյգ
թէ իշխանն ինչ աստիճան ունէր հա-
րաւային Ափրիկէի բանակին մէջ, այլ
վերջի յայտարարութիւններէն, զոր ը-
րաւ պատերազմի պաշտօնեայն՝ տե-
ղակայն Սղանլէյ՝ խորհրդարանին մէջ,
այն տեղեկութիւններով որ իրեն զըր-
կեր էին Բարեկուսոյ Գլխէն, կ'իմացուի
որ բոլոր բանակին զօրավարն Չէլմե-
ֆօրտ զինքն իրեն օգնական պատերազ-
մի անուանած էր :

Այլ ինչ կերպով չարժեցաւ իշխանն
այն արշաւանքին որ իր մահուանը պատ-
ճառ պիտի ըլլար, և ստուգիւ ինչպի-
սի էր այն գործը. և արդեօք գլխատրէ
մը իրեն հրամայուեցաւ, թէ իշխանին
միայն մտածելովն է՝ ի գործ զնեղովը
քիչ մարդիկներով՝ զորոնք չգիտցուի
թէ ինչպէս ունեցաւ :

Այս ամեն բանին վրայ յիրաւի ա-
ռաջները մթութիւն մը կը պատէր,
ինչպէս նաև Գէրէյ տեղակային պատ-
մութեանը մէջ երկրիմի բան մը կայ,
որ հօս վարը կը յիշատակենք : Պէտք է
գիտնալ որ բարբարոս կամ կէս բար-
բարոս ժողովրդոց դէմ պատերազմնե-
րու մէջ՝ խառն չեն պահուիր այն օ-
րէնքներն՝ որոնցմէ եւրոպական բա-
նակներն երբոր քաղաքականացնալ
ազգաց հետ կը կուռին՝ ամենևին չեն
հեռանար : Եւ յիրաւի կ'երևայ թէ ա-
ղիտաւոր գէպքէն քանի մը օր առաջ,
իշխանն արշաւանք մը ըրէր, և որուն
վրայ ուրիշ բան չգտաւ զուրցելու Սղան-
լէյ պաշտօնեայն, բայց թէ իրեն կեանքն
այն ատեն ալ խիստ ծանր վտանգի մը
մէջ գտնուեցաւ :

Յայտնի է թէ լորտ Չէլմեֆօրտ, հա-
րաւային Ափրիկէի անգղիական բանա-
կին գլխաւոր հրամանատարն՝ մեծ
մոմտութի մէջ էր վեհափառ կամաւոր
զինուորին երիտասարդական աշխու-
ժութեանը համար : Իրեն ընկերակցին
ուղղած նամակներուն մէջ, որոնք խոր-

հրդարանին մէջ Սղանլէյ պաշտօ-
նեայէն կարդացուեցան, կը յայտնէ ի-
րեն անհանգստութիւնը որ կը զգար այս
բանիս համար, ինչպէս նաև իշխանին
բնական կազմութեանը, որ այնչափ ու-
ժեղ չէր այնպիսի բանակի մը աշխա-
տութեանցը տոկալու, դիմանալու : Հրա-
մանատարը կը գանգատէր որ զօրաց
կուոյ մը մէջ պէտք եղաւ որ Աբօզ բը-
ժիկն ընկերէ, որուն յանձնուած էր
իշխանը հոգալը, որ յիրաւի երկրին ջեր-
մէն հիւանդ ընկաւ, և պէտք եղաւ որ
քիչ ժամանակուան համար Նուրպան
քաղաքը կենայ :

Ի սկզբան իշխանին մահուանը միակ
ունեցած վաւերական պատմութիւնը
եղաւ միայն Գէրէյ տեղակային գրածը,
որ Սեբրուն յարձակմունքէն ապրե-
լով, այս յետագայ պատմութիւնն ը-
րաւ անգլիական լրագրի մը թղթա-
կցին :

« Այս առաւօտ (1 յունիս), իշխանը
խնդրեց որ առաջ երթայ, երկրորդ օ-
րուան բանակին տեղը ընտրելու հա-
մար, վեց զինուորով և վեց (տեղացի)
Պասսուդոսներով : Այս վերջինները
չեկան : Գորբիէ Ալէյնը թողուցինք
7,30ին : Գնացինք ձիով յիգէլէգի և
Պասսուդոսներուն սպասեցինք : Եւ ո-
րովհետև իշխանին համբերութիւնը կը
հատնէր չտեսնալով անոնց հասնիլը,
առանց իրենց ճամբայ ինկանք մինչև
Խսէլաւան լեռը : Մէկ ժամու չափ հե-
ռադիտակով երկիրը զննեցինք, բայց
առանց կենդանի մարդ մը տեսնալու :
Իմանք հովտի մը մէջ մինչև ամայի
քրաւալ մը : Ոտքերնիս գետին գրինք և
կեցանք ժամ մը սպասելու մտքով : Երբ
որ յիշեցուցի իշխանին որ ժամն ան-
ցաւ, ինքը պատասխանեց, « դեռ տա-
սը վայրկեան ալ » : Վերջապէս, ձիերը
պատրաստելով, հրաման տուաւ իշխա-
նը հեծնալ : Այն միջոցին տեսանք որ
բարձր խոտերու մէջ, որոնցմով չըջա-
փակուած էինք, շատ Զուլուներ կը
գտնուէին, որոնք վրանիս սկսան հրա-
ցան արձակել : Ելանք ճամբայ ինկանք
արշաւատոյր : Տոնկայի մէջէն անցնելու

ատեն 200 եւրոտ հեռադրութենէ մը (1 եւրոտ = մ. 0914) տեսանք որ իշխանին ձին զատարկ թամբով ետենէս կը վազէր։ Կարծեմ թէ իշխանը քրտաւ լին մէջ սպաննուած պիտի ըլլայ։ Իրեն հետ մէկտեղ ինկան երկու ուղեկից զինուորներն ։

Եթէ գէպը այսպէս պտտահած ըլլայ, յայտնի կը տեսնուի որ Գերէյ տեղակալը գէշ գործեց այս բանին մէջ, միայն ինքըզինքը մտածելով առանց հոգ ընելու իրմէ աւելի թանկագին կեանքի մը։ Այն ալ ստոյգ է որ տեղակալը փորձեց վերջը ինքզինքը արգարացընել փոխելով իր առջի պատմութիւնը։ Այսինքն թէ հաստատելով որ առաջին հրացանաց պարպելուն իշխանը ընկաւ մեռաւ, և թէ ինքը այն ատեն փախաւ՝ երբոր տեսաւ որ ալ իր զինուորակիցը ազատելու յոյս մը չկար։

Բայց այս վերջի ըսածն ալ ուրիշ կողմանէ սուտ ելաւ, վասն զի իշխանին մարմնոյն վրայ հրացանի հարուածոց ամենեւին նշան չգտնուեցաւ։ Ասոր համար է որ իշխանին մահը մեծ ցաւ պատ-

ճառեց յԱնգղիա, ինչպէս նաև իրենց համար մեծ նուաստութիւն։ Բաց 'ի Գերէյէ ծանր կտամբանաց տակ ինկաւ նաև Չիլմսֆորտ զօրադուին, որ իշխանին կենացը վրայ հսկելուն այն հոգը այն խնամքը չունեցաւ՝ ինչպէս ցուցուց Բարեյուտոյ Գլխոյն դժբաղդ բանակին վրայ։

Զուլունները ընդհանրապէս կը կտրատեն ընկած թշնամիները, ուստի բաղդ մը եղաւ որ մարմինը անարատ գրտնուեցաւ, թէպէտ և տասներեօթը զաւկայիւայի հարուածներէ վիրաւորուած՝ որոնցմէ մէկը թափ անցեր էր աչքին մէջ։ Վիրը կախուած մնացեր էր դեռ միտալ մը՝ որուն մէջ կար իրեն հօրը մագերէն և ուղղափառ հաւատոյ ջերմեռանդական առարկաներ։

Դիակը անզդիացի պատերազմական նաւով բերուեցաւ 'ի Տիւրպան, ուսկից փոխադրուեցաւ ուրիշ նաւու մը մէջ, և անով հասաւ յուլիսի կէսերը յԱնգղիա։ Չիզըլըրսոյ մեծ և փառաւոր յուզար, կաւորութիւն եղաւ։

ԶՈՒԼՈՒ ԱԶԳԻՆ ԱՒԵՈՒՈՐԱԿԱՆ ՎԻՃԱԿՆ

Բարեյուտոյ Գլխին հանդիսացեալ թատերական տեսարանն դարձեալ բովանդակելուպիւղ ուղադրութիւնը նաբոլէտն Գի որդւոյն սրտառու ժահուամբը գրաւեց Զուլու ազգին վրայ, զոր ընկճելու համար երկայն ժամանակէ 'ի վեր կ'աշխատի Անգղիոյ քաղաքակաւնացեալ զօրութիւնն։ Զուլուք ըստ ամենայնի բարբարոս ժողովուրդ մ'են։ Իրենց երկիրը կ'ինկնայ Հնդկային Ովկիանոս արեւմտեան ափանցը վրայ, գրեթէ Մատակաքար կողմոյն հարաւային սահմանածայրին գիմացը, և կը տարածի հարաւային կողմանէ Գուկղա գետոյն խառնուեքէն՝ գէպ 'ի հիւսիս մինչև Տիւրպոյայ ծոցը։ Գարուփոս և անտառային ըլլալով՝ ամենայարմար է

նիզակաւոր պատերազմներու և դարանակալութեանց։ Բնակչաց թիւը 350 հազար կը համարուի։ Մարդկանց մէջ կարողները պարտաւորեալ են զինուորական կենաց՝ պատանեկութեան ըսկիզբէն մինչև 'ի մահ։ Երկուքէն սկըսեալ մինչև հինգ տարուան միջոցի մէջ, բովանդակ երկրին մէջ գտնուած 14 տարուան հասած պատանեաց գունդ մը կը կազմուի։ Այս գունդս իրեն քրտնաւ կամ զինուորական ամրոցը կը չինէ, հոն բնակութիւն հաստատելով։ Քանի մը տարուընէ յետոյ՝ նոր գունդը կը միանայ նախընթաց հին գնդի մը հետ, զինուորական կրթութիւնն ամբողջացընելու համար։ Քանի մը ամրոցաց կամ գնդից բազմութիւնն՝ զինուո-